ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հուլիսի 18-20-ը Շվեյցարիայի Համադաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Ռաֆայել Գևորգյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Շվեյցարիայի Համադաշնություն, ք. Ժնև, 2022թ. հուլիսի 18-20-ը

4. Հրավիրող կողմը

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄՍՀԿ) անդամ երկրների Ասամբլեաների 63-րդ հանդիպումներին:

6. Քննարկված թեմաները

ՄՍՀԿ տարեկան հաշվետվության ներկայացում, ՄՍՀԿ բյուջեի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գլխավոր ասամբլեայի շրջանակներում նախապես պայմանավորվածության համաձայն տեղի ունեցավ հանդիպում ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դարեն Թանգի հետ:

Քննարկվեցին հարցեր ուղղված մտավոր սեփականության (ՄՍ) ազգային համակարգի զարգացմանը, որի նպատակով ձեռք բերվեցին պայմանավորվածություններ իրազեկման բարձրացման, համատեղ միջոցառումների անցկացման, ՄՍՀԿ ուսումնական նյութերի թարգմանության աջակցման վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում մտավոր սեփականության գրասենյակի և ՄՍՀԿ-ի միջև ստորագրվեց մտավոր սեփականության ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր:

Փոխըմբռնման հուշագիրը միտված է ընդլայնելու երկկողմ համագործակցությունը՝ նպատակ ունենալով հետագայում զարգացնել ՄՍ ազգային համակարգը՝ իրականացնելով ՄՍ ազգային ռազմավարությունը, ուժեղացնելով ՄՍ կրթության և առևտրայնացման ոլորտում համալսարանների և գիտահետազոտական հաստատությունների կարողությունները և բարձրացնելով իրազեկությունը ՄՍ իրավունքների նկատմամբ հարգանքի ձևավորման գործում:

Հանդիպման ընթացքում քննարկում եղավ նաև ՄՍՀԿ հետ համատեղ Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարության մշակմանն ուղղված աշխատանքների ընթացքի մասին, ինչպես նաև Գրասենյակի կայքում ներդրված ՄՍ օբյեկտների էլեկտրոնային հայտերի ներկայացման համակարգի կատարելագործման հարցում ՄՍՀԿ աջակցության վերաբերյալ:

Հանդիպման ավարտին ՄՍՀԿ գլխավոր տնօրեն Դարեն Թանգը հրավիրվեց պաշտոնական այցով ժամանելու Հայաստանի Հանրապետություն:

Տեղի ունեցավ հանդիպում ՄՍՀԿ ՄՍ և ինովացիոն էկոհամակարգերի սեկտորի գլխավոր տնօրենի օգնական Մարկո Ալեմանի հետ, որի ընթացքում քննարկվեց համաշխարհային նորարարության ինդեքսում Հայաստանի Հանրապետության զբաղեցրած դիրքի վերաբերյալ հարցը: Այդ կապակցությամբ պայմանավորվածություն ձեռք բերվեց մշտապես ստույգ տեղեկատվություն տրամադրել ՄՍՀԿ-ին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները

Փոխադարձ համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերվեց ընդլայնելու երկկողմ համագործակցությունը՝ իրականացնելով ՄՍ ազգային ռազմավարությունը, ուժեղացնելով ՄՍ կրթության և առևտրայնացման ոլորտում համալսարանների և գիտահետազոտական հաստատությունների կարողությունները և բարձրացնելով իրազեկությունը ՄՍ իրավունքների նկատմամբ հարգանքի ձևավորման գործում:

Ընդունվեցին որոշումներ մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարության մշակման համար ՄՍՀԿ-ի կողմից տրամադրվող աջակցության

քննարկվեց ՄՍՀԿ աջակցությունը ոչ միայն փաստաթղթի մշակման, այլ նաև փաստաթղթով սահմանված միջոցառումների իրականացման հարցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկում ենք մեկնարկել մտավոր սեփականության զարգացման ռազմավարության փաստաթղթում տեղ գտած աշխատանքները ՄՍՀԿ աջակցությամբ:

Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կունենանք ՄՍ ոլորտի զարգացում, իրազեկման մակարդակի բարձրացում, ոլորտի որակյալ մասնագետների պատրաստում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

27.07.2022